



## «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն

### Մամլո հաղորդագրություն

08 սեպտեմբերի, 2009, Երևան

#### *Մրցունակության համաշխարհային զեկույցի համաձայն Հայաստանն իր մրցունակությամբ 97-րդն է աշխարհի 133 երկրների մեջ*

Համաշխարհային մրցունակության զեկույցը իր վերլուծություններն ամփոփում է և համեմատվող երկրներին դասակարգում է Համաշխարհային մրցունակության ցուցչի (ՀԱՄ ցուցիչ) միջոցով: Վերջինս մշակվել է Համաշխարհային տնտեսական ֆորումի (ՀՏՖ) կողմից: ՀԱՄ ցուցիչը, հաշվարկվելով մրցունակության 12 հեմասյունների հիման վրա, երկրների մրցունակության ամփոփ գնահատական է տալիս:

Վարկանիշերի հաշվարկման հիմքում ընկած են վիճակագրական տվյալներ և ընկերությունների ղեկավարների հարցման արդյունքները: Ընկերությունների ղեկավարների հարցումը տարեկան կտրվածքով իրականացվում է ՄԻՋ-ում ներառված երկրներում՝ ՀՏՖ-ի և Համաշխարհային մրցունակության ցանցի գործընկեր կազմակերպությունների կողմից:

«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնը՝ որպես Համաշխարհային մրցունակության ցանցի գործընկեր Հայաստանում, ներկայացնում է «Համաշխարհային մրցունակության զեկույց 2009/10»-ի հիմնական արդյունքները:

ՀՄԶ-ն գնահատում է 133 երկրների տնտեսություններ աշխարհում: 2009/10 զեկույցի արդյունքներով Շվեյցարիան առաջին տեղն է գրավում իր մրցունակությամբ: Երկրորդ տեղում է գտնվում ԱՄՆ՝ ֆինանսական շուկաների և մակրոտնտեսական կայունության առավել ցածր մակարդակով: Մրցունակության ցուցանիշներով լավագույն հնգյակի մեջ են ներառված նաև Սինգապուրը, Շվեդիան և Դանիան:

Մրցունակության տեսանկյունից Հայաստանը 2009թ.-ին անցում է կատարել զարգացման որակապես նոր փուլ, որտեղ փոխվում է մրցունակության խթանիչների դերը: Այս փուլում աճում է տնտեսական արդյունավետության և նորարարական կարողությունների վրա ազդող գործոնների նշանակությունը:

ԱՊՀ տարածաշրջանի երկրների մրցունակության փոփոխությունները ներկայացված են ստորև: Դրական տեղաշարժ արձանագրվել է միայն Ադրբեյջանում, մինչդեռ Ռուսաստանում և Ուկրաինայում մրցունակությունը զգալիորեն նվազել է:



	2009 վարկանիշ	Վարկանիշի փոփոխություն 09/08, միավոր	2009 միավոր	Միավորի փոփոխություն 09/08, %
Հայաստան	97	0	3.71	-0.4%
Ադրբեջան	51	18	4.30	4.8%
Վրաստան	90	0	3.81	-1.3%
Ղազախստան	67	-1	4.08	-0.8%
Ղրղզստան	123	-1	3.36	-1.2%
Ռուսաստան	63	-12	4.15	-3.7%
Տաջիկստան	122	-6	3.38	-2.3%
Ուկրաինա	82	-10	3.95	-3.3%

Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից թողարկվող 2009-2010թթ. Մրցունակության համաշխարհային զեկույցում (ՄՀԶ) Հայաստանը 133 երկրների մեջ գրավում է 97-րդ տեղը՝ մնալով անփոփոխ համեմատած նախորդ տարվա հետ: Հայաստանի մրցունակության միավորը (score), ի տարբերություն վարկանիշի, փոքր-ինչ նվազել է, պայմանավորված զարգացման այլ փուլի անցման արդյունքում մրցունակության գործոնների տարբեր խմբերի նկատմամբ կիրառվող կշիռների փոփոխությամբ: Մրցունակության համեմատաբար լավ արդյունքներ գրանցվել են հիմնարար ոլորտներում: Հատկապես զգալի է առաջընթացը ենթակառուցվածքների և մակրոտնտեսական կայունության առումով: Որոշակի հետընթաց է արձանագրվել ապրանքային շուկայի արդյունավետության և նորարարության ոլորտում: Բարձրագույն կրթության ու վերապատրաստման, ինչպես նաև աշխատուժի շուկայի արդյունավետության հենասյուները բարելավվել են բացարձակ միավորով, սակայն նվազել են վարկանիշային դիրքով (երկու տեղով): Վերջինս վկայում է այն մասին, որ մնացած այլ երկրները համեմատաբար ավելի արագ են բարելավում իրենց կատարողականն այս ոլորտներում:

### Հայաստանի մրցունակության հենասյուների փոփոխությունները

Հենասյուներ	2009 վարկանիշ	Վարկանիշի փոփոխություն 09/08, միավոր	2009 միավոր	Միավորի փոփոխություն 09/08, %
Ինստիտուտներ	95	1	3.49	-0.1%
Ենթակառուցվածքներ	81	9	3.25	13.0%
Մակրոտնտեսական կայունություն	53	30	4.78	1.0%
Առողջապահություն և տարրական կրթություն	97	0	5.00	-1.1%
Բարձրագույն կրթություն և վերապատրաստում	96	-2	3.46	1.1%
Ապրանքների շուկայի արդյունավետություն	116	-6	3.65	-2.5%
Աշխատուժի շուկայի արդյունավետություն	47	-2	4.61	1.0%
Ֆինանսական շուկայի կատարելագործվածություն	97	10	3.79	3.0%
Տեխնոլոգիական պատրաստվածություն	105	7	2.86	11.8%
Շուկայի չափ	109	2	2.69	8.8%
Գործարարության կատարելագործվածությունը	112	8	3.35	1.5%
Նորարարություն	108	-2	2.71	-2.0%

Հայաստանի հիմնական մրցակցային առավելություններն են պետական պարտքի փոքր չափը, աշխատանքի շուկայի կարգավորումը, ինչպես նաև գյուղատնտեսական քաղաքականությունը,

հանցագործությունների և ահաբեկչության հարուցած ծախսերը: Թերությունների ցուցակը գլխավորում են շուկայում գերիշխող խմբերի առկայությունը և մրցակցության անկատար մակարդակը, որ հակամենաշնորհային անարդյունավետ քաղաքականության հետևանք են: Նախորդ տարվա համեմատ ամենաառաջին թերությունների շարքին են դասվել մաքսային ընթացակարգերի բեռը, տեխնոլոգիաների պետական գնումների քաղաքականությունը, բիզնես կրթության որակը, դեպի սպառող կողմնորոշումը և իրավասությունների պատվիրակման կամեցողությունը:

**Հայաստանի մրցունակության առավելություններն ու թերությունները**

	<b>Ուշագրավ առավելություններ</b>	<b>Վարկանիշ</b>	<b>Ուշագրավ թերություններ</b>	<b>Վարկանիշ</b>
1.	Մալարիայի ազդեցությունը գործարարության վրա	1	Հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետությունը	132
2.	Մալարիայի դեպքերի քանակը	1	Մաքսային ընթացակարգերի բեռը	131
3.	ՄԻԱՎ/ՉԻԱԳ-ի տարածվածություն	15	Շուկայում գերիշխող խմբերի առկայություն	129
4.	Պետական պարտք	19	Վենչուրային կապիտալի մատչելիություն	129
5.	Աշխատանքից հեռացման հետ կապված ծախսեր	19	Տեղական մրցակցության ուժգնություն	128
6.	Աշխատանքի ընդունելու և աշխատանքից ազատելու գործելակերպեր	22	Բիզնես կրթության/ դպրոցների որակ	125
7.	Հանցագործությունների և բռնության հետևանքով գործարարության ծախսերը	23	Արտաքին շուկաների չափ*	125
8.	Ահաբեկչության հետևանքով գործարարությանը հասցվող վնասը	26	Իրավասությունները պատվիրակելու կամեցողություն	125
9.	Գյուղատնտեսական քաղաքականության ծախսերը	26	Դեպի սպառող կողմնորոշման աստիճան	124
10.	ՄԻԱՎ/ՉԻԱԳ-ի ազդեցությունը գործարարության վրա	34	Տեխնոլոգիական ապրանքների պետական գնումների քաղաքականություն	124

**«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն**

«Տնտեսություն և արժեքներ»-ը մտավոր կենտրոն է, որը ձգտում է ներմուծել զարգացման նոր հայեցակարգեր բարձրակարգ միջազգային կապերի, լավագույն որակավորում ունեցող վերլուծաբանների և խորհրդատուների ցանցի միջոցով: Կենտրոնի մասնագիտացումը մրցունակության համակողմանի ուսումնասիրությունն է մակրո և միկրո մակարդակներում, կենտրոնանալով հետևյալ հիմնական ուղղությունների վրա՝ ազգային տնտեսական և ճյուղային ռազմավարություններ, օտարերկրյա ներդրումներ, սփյուռքի ցանցեր և արժեքները գործարար և հանրային ոլորտներում:

«Ի-Վի Քոնսալթինգ» ընկերությունը «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնի բիզնես խորհրդատվական թևն է: «Ի-Վի Քոնսալթինգ»-ը գործարար խորհրդատվական, հետազոտական և ֆինանսական միջնորդի ծառայություններ է մատուցում նորարարության և մրցունակության ձգտող կազմակերպություններին:

Երևան 0051, Գոլսեփ Էմին123  
 Գեռ. +37410 219740  
 Էլ-փոստ. [info@ev.am](mailto:info@ev.am)  
[www.ev.am](http://www.ev.am)